

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԲԸԱՀԾՁԲ-17/6 ՄԱ.»**

Ձ. Երևան

<<16>> փետրվարի 2017թ.

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ի.Խաչիկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ամիրջանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայության /փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի 2-րդ էներգարկի շահագործման ժամկետի երկարաժաման ծրագրով սահմանված աշխատանքների անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման, ռադիոլոգիական և ռադիոցիմիական չափումների լաբորատորիայի ստեղծման և շահագործման, և կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության/ մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 66 899 017 (վաթսուներկու միլիոն ութ հարյուր ինսուսինը հազար տասնյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 քանակային օրվա ընթացքում), քայք ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված գումարի 0,05 (օտո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության
կարգավորման ՊԿ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառն. Վարչ.
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Աշխատակազմի ղեկավար
Խ.Խաչիկյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության
գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
Իննկորանկ
ՀՀ 2052022100061001
ՀՎՀՀ 02558849



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

2017 թվականին ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին փորձաքննության ծառայությունների /փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով սահմանված աշխատանքների անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման, ռադիոլոգիական և ռադիոքիմիական չափումների լաբորատորիայի ստեղծման և շահագործման, և կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության/ մատուցման

1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննություն		
հհ	Ծառայությունների անվանումը	Ծառայությունների բնութագիրը
1.1	Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության գնահատում, տեխնիկական որոշումների, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վտանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի և միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի գնահատում և փորձաքննություն /11 տեխնիկական որոշում կամ փաստաթուղթ, յուրաքանչյուրը 22 մարդ-օր աշխատաժամանակով/:	<ol style="list-style-type: none"> 1. Ներկայացված տեխնիկական որոշումների, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի և ծրագրերի, միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերվող այլ փաստաթղթերի ամբողջականության ստուգում: 2. Անվտանգության պահանջների և չափորոշիչների համապատասխանության ստուգում /անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգողական հաշվարկներ/: 3. Ներկայացված հաշվարկների, նախագծային լուծումների ստուգման համար սեփական մաթեմատիկական մոդելի ձևափոխում /անհրաժեշտության դեպքում/: 4. Փորձագիտական գնահատականների կատարում և եզրակացության մշակում:
1.2	ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու 29-րդ վերաբեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն: Ակտիվ գոտու ու միջուկային վառելիքի հետ աշխատանքների անվտանգության հիմնավորման գնահատում:	<ol style="list-style-type: none"> 1. Ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության ստուգում: 2. Ներկայացված հաշվարկների ստուգման համար Կենտրոնի կողմից PARCS-RELAP և PARCS-PATHS ծրագրերով մշակված ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ակտիվ գոտու մաթեմատիկական մոդելի ձևափոխում: 3. Ստուգողական հաշվարկների և փորձագիտական գնահատականների կատարում: 4. Ներկայացված անվտանգության հիմնավորումների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական գնահատականների կատարում: 5. Եզրակացության մշակում:

1.3	<p>ՀԱԷԿ-ի կանգառի վիճակի համար նախատեսված վթարային շահագործման ընթացակարգերի և դրանց անալիտիկ հիմնավորումների դիտարկում /սլանավորված աշխատաժամանակի ծավալով/:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Կանգառի վիճակի համար նախատեսված ախտանիշային վթարային շահագործման ընթացակարգերի դիտարկում, ներառյալ. <ul style="list-style-type: none"> - Мониторинг дерева состояния КФБ на остановленном реакторе, - Обесточивание блока, - Увеличение нейтронной мощности, - Течь из первого контура, - Потеря отвода тепла от первого контура, - Угроза возникновения термических напряжений в корпусе реактора, - Высокая активность в боксе ПГ-ГЦН, - Неуправляемое повышение температуры первого контура: 2. Կանգառի վիճակի համար նախատեսված ախտանիշային վթարային շահագործման ընթացակարգերի տեխնիկական հիմնավորումների դիտարկում, ներառյալ. <ul style="list-style-type: none"> - Обесточивание блока, - Увеличение нейтронной мощности, - Течь из первого контура, - Потеря отвода тепла от первого контура, - Угроза возникновения термических напряжений на корпусе реактора, - Высокая активность в боксе ПГ-ГЦН, - Неуправляемое повышение температуры первого контура: 3. Կանգառի վիճակի համար նախատեսված ախտանիշային վթարային շահագործման ընթացակարգերի անալիտիկ հիմնավորումների դիտարկում, ներառյալ. <ul style="list-style-type: none"> - Анализ по сценариям снижения запаса теплоносителя в первом контуре (подкритическое состояние блока с температурой первого контура 150°C), - Анализ по сценариям снижения запаса теплоносителя в первом контуре (холодное плотное состояние первого контура, - Анализ по сценариям снижения запаса теплоносителя в первом контуре (холодное и неплотное состояние первого контура): 4. Կանգառի վիճակի համար նախատեսված ախտանիշային վթարային շահագործման ընթացակարգերի վալիդացիա: 5. Հաշվետվության մշակում:
2.	<p>ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով սահմանված աշխատանքներ</p>	
hh	<p>Ծառայությունների անվանումը</p>	<p>Ծառայությունների բնութագիրը</p>
2.1	<p>Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորման հաշվետվության փորձաքննություն (Отчет по обоснованию продления срока службы невозстанавливаемых и незаменимых элементов энергоблока):</p>	

2.1.1	Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորման համար կատարված ջերմահիդրավիկ վերլուծությունների փորձաքննություն /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթի ամբողջականության ստուգում: 2. Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մեխանիկական հատկությունների հաշվարկի համար կատարված ջերմահիդրավիկ վերլուծությունների ցանկի և կիրառված սահմանային պայմանների ստուգում: 3. Ընտրված սցենարների վերլուծության կատարում և արդյունքների համեմատություն: 4. Եզրակացության մշակում:
2.1.2	Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մեխանիկական հատկությունների հաշվարկի և եզրակացությունների փորձաքննություն /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթի ամբողջականության ստուգում: 2. Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մեխանիկական հատկությունների ուսումնասիրության մեթոդաբանության ստուգում: 3. Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մեխանիկական հատկությունների ուսումնասիրության մեջ կիրառված սկզբնական տվյալների ստուգում: 4. Կիրառված հաշվարկային մեթոդների և ստացված արդյունքների, օգտագործված անվտանգության գործակիցների և չափորոշիչների վերաբերյալ կարծիքի տրամադրում: 5. Եզրակացության մշակում:
2.2	ՀԱԷԿ-ի N2 էներգաբլոկի տարրերի ծերացման կառավարման ծրագրի փորձաքննություն և համաձայնեցում (Программа по управлению старением) /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված ծրագրի դիտարկում՝ ծերացման կառավարման ծրագրի պահանջների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրության և ԵՀ AR/RA/05-06 պրոյեկտի շրջանակներում մշակված միջուկային տեղակայանքների անվտանգության համար կարևոր համակարգերի, կառուցվածքների և կոմպոնենտների ծերացման կառավարման կարգավորող պահանջներին համապատասխանության տեսանկյունից: 2. ՀԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման ծերացման կառավարման ծրագրի ամբողջականության ստուգում: 3. Փորձագիտական գնահատականների կատարում և եզրակացության մշակում:
2.3	ՀԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում վերականգնվող տարրերի գոյապաշարի կառավարման ծրագրի փորձաքննություն և համաձայնեցում /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. Գոյապաշարի կառավարման ծրագրի պահանջների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն: 2. ՀԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում վերականգնվող տարրերի գոյապաշարի կառավարման ծրագրի ամբողջականության ստուգում: 3. Միջազգային փորձից բխող պահանջներին ծրագրի համապատասխանության ստուգում: 4. Փորձագիտական գնահատականների կատարում և եզրակացության մշակում:

3. Կոմիտեի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ		
հհ	Ծառայությունների անվանումը	Ծառայությունների բնութագիրը
3.1	Բնական շրջանառության պայմաններում կոնտուրի սառեցման ընթացքում ռեակտորի կափարիչի տակ ջերմատարի հովացման պրոցեսի առանձնահատկությունների հետազոտություն ANSYS CFX կոդի միջոցով:	<ol style="list-style-type: none"> 1. ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի կափարիչի տակ եղած ծավալի եռաչափ մոդելի մշակում: 2. Եռաչափ մոդելի մեշավորում: 3. Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում: 4. Թվային լուծումների վերլուծություն: 5. Հաշվետվության մշակում:

3.2	Ռիսկ-տեղեկացված տեսչական ստուգումների պլանավորման վերաբերյալ մեթոդաբանական փաստաթղթի առաջին տարբերակի մշակում:	<ol style="list-style-type: none"> 1. Տեսչական ստուգման արդյունքների գնահատման մոտեցման մշակում: 2. Առաջարկվող մոտեցման օգտագործում ռիսկ-տեղեկացված տեսչական ստուգումների համար: 3. Հաշվետվության մշակում:
3.3	Նեյտրոն-միջուկային փոխազդեցության կտրվածքներում առկա անորոշությունների ազդեցության գնահատում ՋՋԷՌ-440 ռեակտորի ակտիվ գոտու նեյտրոնաֆիզիկական բնութագրերի վրա:	<ol style="list-style-type: none"> 1. Փոխազդեցության կտրվածքներում եղած անորոշությունների ընտրանքի մշակում Մոնթե Կարլո մեթոդով: 2. Փոխազդեցությունների կտրվածքների ներմուծում PARCS ծրագիր: 3. Ակտիվ գոտու նեյտրոնաֆիզիկական բնութագրերի գնահատում: 4. Հաշվետվության մշակում:
3.4	Իոնացնող ճառագայթման աղբյուրներ օգտագործող օբյեկտներում մինչ այժմ ՀՀ ԱՆ ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոնի կողմից իրականացված և Կոմիտե ներկայացված անհատական մոնիթորինգի արդյունքների վերլուծություն /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. Բժշկական, արդյունաբերական և այլ կազմակերպություններում ՀՀ ԱՆ ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոնի կողմից իրականացված և Կոմիտեին ներկայացված անհատական մոնիթորինգի տվյալների հավաքագրում, գնահատում և վերլուծություն: 2. Իրականացված անհատական մոնիթորինգի աշխատանքների վերլուծության հիման վրա հաշվետվության մշակում, ներառյալ հետագա տեսչական ստուգումների պլանավորման, կազմակերպման և իրականացման համար առաջարկներ:
3.5	«Ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքներ /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. Նոր օրենքի նախագծի մշակում՝ համաձայն Կոմիտեի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի:
3.6	Վթարային իրավիճակներում ռեակտորի ակտիվ գոտում հակուղղված հոսքերի սահմանափակման երևույթի (CCFL) հետազոտություն ANSYS CFX կողմից միջոցով:	<ol style="list-style-type: none"> 1. ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի առաջին կոնտուրի գլխավոր շրջանառության խողովակաշարի եռաչափ մոդելի կառուցում: 2. Եռաչափ մոդելի մեշավորում: 3. Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում: 4. Թվային լուծումների վերլուծություն: 5. Հաշվետվության մշակում:
3.7	ՀԱԷԿ-ի N2 էներգաբլոկի գլխավոր շրջանառության և ճնշման փոխհատուցչի խողովակաշարերի դինամիկ վերլուծություն:	<ol style="list-style-type: none"> 1. Մոդելի մշակում և վերջավոր էլեմենտների քաժանում: 2. Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում: 3. Թվային լուծումների արդյունքների մշակում: 4. Մոդել վերլուծություն: 5. Դինամիկ կառուցվածքային վերլուծություն: 6. Հակազդման սպեկտրի վերլուծություն: 7. Հաշվետվության մշակում:
3.8	«Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում վթարների ճառագայթային հետևանքների գնահատման պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:	<ol style="list-style-type: none"> 1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում վթարների ճառագայթային հետևանքների գնահատման ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրում: 2. «Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում վթարների ճառագայթային հետևանքների գնահատման պահանջներ. Փաստաթղթի նախագծի մշակում և քննարկում Կոմիտեի հետ: 3. Նախագծի լրամշակում՝ հաշվի առնելով Կոմիտեի դիտողությունները և առաջարկությունները:

4. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ռադիացիոն անվտանգության հսկողության գործընթացին աջակցող աշխատանքներ		
հհ	Ծառայությունների անվանումը	Ծառայությունների բնութագիրը
4.1	Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի և Միացյալ կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության համապատասխան մասերի և միջազգային փորձագիտական հանրության կողմից տրված հարցերի պատասխանների մշակում:	<ol style="list-style-type: none"> 1. Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի շրջանակներում մշակված ՀՀ ազգային հաշվետվության վերաբերյալ ԱԷՄԳ անդամ պետությունների կողմից ներկայացված, Կենտրոնին հանձնարարված հարցերի պատասխանների մշակում և մասնակցություն Կոմիտեում կազմակերպված քննարկումներին: 2. Միացյալ կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության համապատասխան մասերի մշակում և միջազգային փորձագիտական հանրության կողմից տրված հարցերի պատասխանների մշակում:
4.2	Կոմիտեի միջուկային տեղեկատվական համակարգի մոդուլների, ներառյալ իոնացնող ճառագայթման աղբյուրների ազգային ռեգիստրի /RASOD/, լիցենզիաների և թույլտվությունների ռեգիստրի /AUTHORIZATION/, իոնացնող ճառագայթման աղբյուրներ օգտագործող/օգտագործած օբյեկտների ռեգիստրի /LICENSEES/, քննությունների անցկացման էլ. համակարգի /TESTING/, միջուկային նյութերի ռեգիստրի /NUCMAT LOF/, տեսչական գործունեության գրանցման ռեգիստրի /INSPECTION/, ինչպես նաև փաստաթղթերի և հանձնարարությունների գրանցման ռեգիստրի /WORKUS/ վարում և կատարելագործում, համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի, ֆիզիկական պաշտպանության համակարգի սպասարկում տարվա ընթացքում: Կոմիտեի նոր վեբ-կայքի մշակում:	<ol style="list-style-type: none"> 1. Կոմիտեի միջուկային տեղեկատվական համակարգի RASOD, AUTHORIZATION, LICENSEES, NUCMAT, TESTING, INSPECTION, WORKUS մոդուլների վարում և կատարելագործում, համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի, ֆիզիկական պաշտպանության համակարգի սպասարկում, միջազգային հանդիպումների ընթացքում wifi կապի ապահովում տարվա ընթացքում: 2. Կոմիտեի նոր վեբ-կայքի մշակում՝ համաձայն ներկայացված տեխնիկական առաջադրանքի:
4.3	Բաղիտակտիվ թափոնների հաշվառման և վերահսկման էլեկտրոնային թաղայի մշակում /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. Տեխնիկական առաջադրանքի մշակում և համաձայնեցում Կոմիտեի հետ: 2. Բազայի մշակում:

4.4	Տեխնիկական աջակցություն Կոմիտեի կողմից իրականացվող տեսչական և լիցենզավորման գործունեությանը:	<ol style="list-style-type: none"> Տեխնիկական աջակցություն Կոմիտեի կողմից իրականացվող տեսչական և լիցենզավորման գործունեությանը հետևյալ ուղղություններով. <ul style="list-style-type: none"> - Իռնացնող ճառագայթման աղբյուրների օգտագործմամբ աշխատատեղերի ճառագայթային մոնիթորինգի իրականացում: - Ոննտգնեյան ճառագայթահարիչների երկարատև կայունության չափումների իրականացում: - Կոմիտեի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրություն: - Տեսչական ստուգումների ծրագրերի մշակում: - Մասնակցություն տեսչական այցերին՝ ռադիոմետրիկ, դոզիմետրիկ ոննտգնեյան ճառագայթահարիչների երկարատև կայունության չափումների իրականացում, արդյունքների մշակում և եզրակացության տրամադրում: - Կոմիտեի անձնակազմի անհատական դոզիմետրիկ չափումների իրականացում: - Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակում և ներկայացում:
4.5	Միջուկային տեղակայանքներում պատահարների վերաբերյալ հաշվետվությունների /IRS/ և միջուկային տեղեկատվության /INIS/ միջազգային համակարգերի վարում /70 գիտական հրապարակման մասին գրառման համապատասխան ձևի մշակում և ներկայացում ԱԷՄԳ/:	<ol style="list-style-type: none"> 1. ՀԱԷԿ-ում տեղի ունեցած պատահարների մասին մանրամասն տեղեկությունների հավաքում և գնահատում: 2. IRS-ի հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում: 3. IRS-ի աշխատանքային հանդիպումներին մասնակցություն: 4. IRS-ից ստացված նյութերի ուսումնասիրում և շահագրգիռ կողմերին տրամադրում: 5. INIS-ի պահանջներին համապատասխան ՀՀ գիտական ամսագրերում տպագրված հոդվածների մշակում և ԱԷՄԳ-ին ներկայացում:
4.6	Աջակցություն Կոմիտեի վթարային կենտրոնի և պահեստային կետի աշխատանքներին /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	<ol style="list-style-type: none"> 1. Մասնակցություն Կոմիտեի վթարային կենտրոնի վարժանքներին: 2. Կոմիտեի վթարային կենտրոնի վարժանքների սցենարների լրամշակում՝ հիմք ընդունելով Կոմիտեի կողմից անցկացված ուսումնական վարժանքների արդյունքները: 3. Կոմիտեի վթարային կենտրոնի հրահանգների կատարելագործում վարժանքների արդյունքում տրված դիտողությունների հիման վրա: 4. Պահեստային կետի համակարգիչների վրա տեղադրված վթարային ծրագրերի սպասարկում տարվա ընթացքում:

4.7	<p>Մասնակցություն ՋՋԷԴ շահագործող երկրների կարգավորող մարմինների Ֆորումի ԱՀԿ և ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբերի գործունեությանը:</p>	<ol style="list-style-type: none"> 1. ՋՋԷԴ շահագործող երկրների կարգավորող մարմինների Ֆորումի ԱՀԿ աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում (questionnaire), վերլուծություն, աշխատանքային խմբի գործունեության համակարգում: 2. ՋՋԷԴ շահագործող երկրների կարգավորող մարմինների Ֆորումի ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում (questionnaire) և վերլուծություն: 3. Մասնակցություն ՋՋԷԴ շահագործող երկրների կարգավորող մարմինների Ֆորումի ԱՀԿ և ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբերի հանդիպումներին:
-----	---	---

5. Եւրո մասնագետի պատրաստում Կոմիտեի համար		
hh	Ծառայությունների անվանումը	Ծառայությունների բնութագիրը
5.1	Կոմիտեի համար եւրո մասնագետների պատրաստման աշխատանքներ /2 մասնագետ/:	<ol style="list-style-type: none"> 1. Մասնագետի պատրաստման ծրագրի մշակում/վերամշակում: 2. Մասնագետի պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակում/վերամշակում: 3. Եւրո պատրաստվող մասնագետի համար դասընթացների առաջին փուլի կազմակերպում և անցկացում: 4. Եւրո պատրաստվող մասնագետի համար դասընթացների երկրորդ փուլի կազմակերպում և անցկացում:

6. Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգ		
hh	Ծառայությունների անվանումը	Ծառայությունների բնութագիրը
6.1	Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության տեսանկյունից բարձր ռիսկ ներկայացնող օբյեկտներում և կից տարածքներում գամմա ճառագայթման բնական ռադիոակտիվ ֆոնի չափումների, նմուշառումների և գամմա սպեկտրոմետրիկ չափումների իրականացում:	<ol style="list-style-type: none"> 1. Դոզիմետրիկ համակարգերի միջոցով երևանում և երևանին կից տարածքներում գամմա ճառագայթման բնական ռադիոակտիվ ֆոնի չափման համար անհրաժեշտ կետերի/տարածքների ընտրություն: 2. Դոզիմետրիկ համակարգերի միջոցով երևանում և երևանին կից տարածքներում գամմա ճառագայթման բնական ռադիոակտիվ ֆոնի չափումների իրականացում՝ GPS կոորդինատների ֆիքսմամբ: 3. Ընտրված կետերում գամմա սպեկտրոմետրիկ չափումների իրականացում: 4. Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության պարրաստում և ներկայացում:
6.2	Իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ առնչություն ունեցող բժիշկ-սրտաբանների անհատական ճառագայթային մոնիթորինգի անցկացում և արդյունքների վերլուծություն:	<ol style="list-style-type: none"> 1. Սրտաբանական օբյեկտներում բժիշկ-սրտաբանների անհատական ճառագայթային մոնիթորինգի անցկացում: 2. Ստացված անհատական ճառագայթային մոնիթորինգի տվյալների հավաքագրում, գնահատում և վերլուծություն: 3. Վերլուծության արդյունքների հիման վրա հաշվետվության պատրաստում: 4. Հետագա անհատական ճառագայթային մոնիթորինգի պլանավորման, կազմակերպման և իրականացման համար առաջարկների պատրաստում և ներկայացում:

7. Ռադիոլոգիական և ռադիոքիմիական չափումների լաբորատորիայի ստեղծման և շահագործման աշխատանքներ

7.1	Ռադիոլոգիական և ռադիոքիմիական չափումների լաբորատորիայի կազմակերպման և տեխնիկական միջոցներով հազեցման ծրագրի մշակում: Սահմանափակ թվով հետազոտությունների համար մեթոդակարգերի մշակում /պլանավորված աշխատաժամանակի ծավալով/:	1. Ռադիոլոգիական և ռադիոքիմիական չափումների լաբորատորիայի ստեղծման և շահագործման ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրում: 2. Ռադիոլոգիական և ռադիոքիմիական չափումների լաբորատորիան տեխնիկական միջոցներով և համակարգերով համալրելու պլանի մշակում: 3. Ռադիոլոգիական հետազոտությունների իրականացման մեթոդակարգերի մշակում /սահմանափակ թվով/:
Ծառայության մատուցման ժամկետ		
Սկիզբ		Ավարտ
Հունվար 2017թ.		Դեկտեմբեր 2017թ.

* Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են համաձայն Պատվիրատուի կողմից առաջարկված պատվեր - առաջադրանքների:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման ՊԿ
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 ՀՀ ՖՆ գործառն. Վարչ.
 ՀՀ 900011040020
 ՀՎՀՀ 02705793
 Աշխատակազմի ղեկավար
 Խ.Խաչիկյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 Իննկորանկ
 ՀՀ 2052022100061001
 ՀՎՀՀ 02558849
 Տնօրեն
 Ա.Ամիրջանյան



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Որամ»

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											Ընդամենը Տարի	
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր		դեկտեմբեր
1	Փորձաքննության անցկացման ծառայություն	-	-	6 090 000	22 864 900	22 864 900	22 864 900	39 639 900	39 639 900	39 639 900	66 899 017	66 899 017	66 899 017	66 899 017

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«ՎԱ միջուկային անվտանգության կարգավորման ՊԿ
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 ՀՀ ՖՆ գործառն. Կարգ.
 ՀՀ 900011040020
 ՀՎՀՀ 02705793
 Աշխատակազմի ղեկավար
 Խ. Խաչիկյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիոազիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 ԻնՆկորանկ
 ՀՀ 2052022100061001
 ՀՎՀՀ 02558849



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
 Պայմանագրի համարը՝ _____
 Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
 Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
 Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը
 նախագծած ներկայացուցչի N _____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև
 նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական
 բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ան ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի՝	
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			Վճարման ենթակա զումարը /հազար դրամ/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) _____ և
(Պատվիրատուի անունը)
_____ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ –ին հանձնման-
ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն
ստորագրություն

Ընդունեց

իայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն
ստորագրություն